

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

\_\_\_ հուլիսի 2013 թվականի N \_\_\_ - Ն


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՄԱՅԻՍԻ 26-Ի N 990-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի «Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արգավանդի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» N 990-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) Որոշմամբ հաստատված N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի:
  - 2) Որոշմամբ հաստատված N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը տասներորդ օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ



Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1  
 ՀՀ կառավարության 2013 թվականի  
 հուլիսի \_\_\_ -ի N \_\_\_ -Ն որոշման

«Հավելված N 1  
 ՀՀ կառավարության 2011 թվականի  
 մայիսի 26-ի N 990-Ն որոշման»

**Ց Ա Ն Կ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԱՎԱՆԴԻ  
 ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐՈՇ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԲԱՑԱՌԻԿ՝  
 ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ ՃԱՆԱԶՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ**

NN ը/կ	Գտնվելու վայրը և նկարագիրը	Նկարագրության արձանագրության կազմման ժամկետը
1.	Արշակունյաց պողոտա ՀՀ պաշտպանության նախարարության ռազմաավիացիոն ինստիտուտ, Արշակունյաց պողոտա 119/1, Արշակունյաց պողոտա 127/3, Արշակունյաց պողոտա 131, Արշակունյաց պողոտա 135/3, Արշակունյաց 292ա բազմաբնակարան շենք, Արշակունյաց պողոտա 286, Արշակունյաց պողոտա 286/4, Արշակունյաց պողոտա 286/8, Արշակունյաց պողոտա 286/14, Արշակունյաց պողոտա 286/17, Արշակունյաց պողոտա 286/18, Արշակունյաց պողոտա 286/19, Արշակունյաց պողոտա 288 (2 միավոր), Արշակունյաց 288/4, Արշակունյաց պողոտա 318/2, Արշակունյաց պողոտա 324/4, Արտաշատի խճուղի 2/5 («Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի արտադրական կեղտաջրերի մաքրման կայան), Արտաշատի խճուղում գտնվող հողամաս, Արտաշատի խճուղի 14/4, Արտաշատի խճուղի 15/1, Նորագավիթ 1-ին փողոց 1, Նորագավիթ 1-ին փողոց 1 տար., Նորագավիթ 1-ին փողոց 1-ին նրբանցք 6, Նորագավիթ 1-ին փողոց 2-րդ նրբ. 3, Նորագավիթ 1-ին փողոց 1 փակ. 10, Նորագավիթ 1-ին փողոց 1 նրբ. 14, Նորագավիթ 1-ին փողոց 1 փակ. 2, Նորագավիթ 1-ին փողոց 2 փակ. 1, Նորագավիթ 1-ին փողոց 2 փակ. 3, Նորագավիթ 1-ին փակ. 8, Նորագավիթ 1-ին փողոց 1-ին նրբ. 24, Նորագավիթ 1- ին փողոց 3, Նորագավիթ 1-ին փող. 2-րդ փակ. 1/1, Նորագավիթ 1-ին փողոց 2-րդ փակ. 7, Նորագավիթ 1-ին փողոց 2-րդ փակ. 2/1, Նորագավիթ 1-ին փողոց 5, Նորագավիթ 1-ին փողոց 7ա (2 միավոր), Նորագավիթ 1 փողոց 2-րդ փակ. 2, Ներքին Շենգավիթ 12 փող 1-ին նրբ. 22 տուն, 1 միավոր, Ներքին Շենգավիթ 12 փող. 1-ին նրբ. 24, Աշտարակի խճուղի 2/5 («Նաիրիտ գործարան» ՓԲԸ):	8 ամիս
2.	Շիրակի փող. 72 շենքին հարակից տարածքում ավտոտնակ, Շիրակի փող. 72/8, Շիրակի փող. 74 շենքի մոտ գտնվող ավտոտնակ, Շիրակի փող. 74 հասցեում վուկանացման կետ, Շիրակի փող. 74, Շիրակի փող. 74/4, Շիրակի փող. 74/5, Շիրակի փող. 74/6, Շիրակի փող. 74/7, Շիրակի փող. 74/8, Շիրակի փող. 74/9, Ծովակալ Իսակովի պող. հարող տարածքում հողամաս, Գետափնյա գյուղական համայնքի հողեր, Ծովակալ Իսակովի պող. 29/1 և 29/3, Կենտրոնական 1-ին փող. 2/2, Սարալանջի փող. 23/1, Սարալանջի փող. 27, Սարալանջի փող. 33, Սարալանջի փող. 35, Սարալանջի փող. 37, Սարալանջի փող. 39:	8 ամիս

Հայաստանի Հանրապետության  
 կառավարության աշխատակազմի  
 ղեկավար


Վ. Գաբրիելյան

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2013 թվականի  
հուլիսի \_\_\_ -ի N \_\_\_ -Ն որոշման

«Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
մայիսի 26-ի N 990-Ն որոշման»

**ՄԱԵՄԱ**

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԱՑԱՌԻՎ ԳԵՐԱԿԱ ՀԱՆՐԱՅԻ ՇԱՀ ՃԱՆԱԶՎԱԾ,  
ՀԱՍԱՐԿԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԵՐՑՎՈՂ ՏԱՐԱԾՔԻ  
ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՊՈՂՈՏԱՆ ԱՐՏԱՇԱՏԻ ԽՃՈՒՂՈՒՆ ՄԻԱՅՆՈՂ ՃԱՆԱՊԱՐԶԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁԱՑՎԱԾ ՉՈՂԱՄԱՍ S- 27.2. հա



Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար

Վ. Գաբրիելյան

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 990-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**«Հ կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտության մասին**

<b>Իրավական ակտի հիմնավորումը</b>	
<b>1.</b>	<p><b>Անհրաժեշտությունը</b></p> <p>Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2011 թվականի մայիսի 19-ին ստորագրված վարկային համաձայնագրով իրականացվող Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի Տրանշ 1-ի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Արշակունյաց պողոտան Արտաշատի խճուղուն միացնող և Արգավանդի ճանապարհային հանգույցը Շիրակի փողոցին միացնող քաղաքային մայրուղու շինարարական աշխատանքները:</p> <p>Այս նպատակով, ճանապարհի նախնական նախագծի հիման վրա ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի «Երևան քաղաքի և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արգավանդի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքներում բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» թիվ 990-Ն որոշմամբ սահմանվել են բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչվող տարածքները՝ համաձայն որոշման հավելված 1-ի:</p>
<b>2.</b>	<p><b>Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</b></p> <p>Արշակունյաց և Շիրակ փողոցների հատման վայրից մինչև Նորագավիթ 1-ին փողոցը նախատեսված օղակաձև ճանապարհային հանգույցի մանրամասն նախագիծն ենթարկվել է էական փոփոխության, ինչի արդյունքում ընդգրկվում են իրացման ենթակա նոր տարածքներ:</p> <p>«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին համապատասխան նշված՝ Արշակունյաց և Շիրակ փողոցների հատման վայրից մինչև Նորագավիթ 1-ին փողոցը նախատեսված օղակաձև ճանապարհային հանգույցի հատվածում իրականացրած նախնական ուսումնասիրությունների արդյունքում Երևանի քաղաքապետարանի կողմից նախապատրաստվել է «ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի թիվ 990-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով առաջարկվում է բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչվող տարածքներ համարել նաև Արշակունյաց պողոտա 286/4, Արշակունյաց պողոտա 286/8, Արշակունյաց պողոտա 286/14, Արշակունյաց պողոտա 286/17, Արշակունյաց պողոտա 286/18, Արշակունյաց պողոտա 286/19, Արշակունյաց 288/4, Արտաշատի խճուղի 2/5, Նորագավիթ 1-ին փողոց 3, Նորագավիթ 1-ին փող. 2-րդ փակ. 1/1, Նորագավիթ 1-ին փողոց 2-րդ փակ. 7 (2 միավոր), Նորագավիթ 1-ին փողոց 2-րդ փակ. 2/1, Նորագավիթ 1-ին փողոց 5, Նորագավիթ 1-ին փողոց 7ա, Նորագավիթ 1 փողոց 2-րդ փակ. 2, Գետափնյա գյուղական համայնքի հողեր, Կենտրոնական 1-ին փող. 2/2, հասցեները:</p> <p>Միաժամանակ, ՀՀ կառավարության որոշման ներկայացված նախագծով առաջարկվում է հետևյալ հասցեները հանել գործող որոշման հավելվածում ընդգրկված ցանկից, քանի որ ըստ ավտոճանապարհի նոր հատակագծի ստորև թվարկված տարածքներն այլու բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչվող տարածքներ համարելու կարիք չկա: Մասնավորապես՝ Արշակունյաց պողոտա 74, Արշակունյաց պողոտա 75, Արշակունյաց պողոտա 127/6, Արշակունյաց պողոտա 127/21, Արշակունյաց պողոտա 127/4, Արշակունյաց պողոտա 133, Արշակունյաց 135ա բազմաբնակարան շենք, Արշակունյաց 135/2 բազմաբնակարան շենք, Արշակունյաց 135/2, Արշակունյաց 135/5, Արշակունյաց պողոտա 266, Արշակունյաց պողոտա 268 հ. 20 խանութ, Արշակունյաց պողոտա 288/3, Արշակունյաց պողոտա 288ա, Արշակունյաց պողոտա 292ա բն. 6, Արշակունյաց պողոտա 300, Արշակունյաց պողոտա 322/3, Արտաշատի խճուղի 5/6, Արտաշատի խճուղի 5/7, Արտաշատի խճուղի 33/13, Արտաշատի խճուղի 100, Արտաշատի խճուղի 100/1, Արտաշատի խճուղի 98, Նորագավիթ 1-ին փողոց 1 նրբանցք 6/2, Նորագավիթ 1-ին փակուղի 4, Նորագավիթ 1-ին փակ. 8ա, Նորագավիթ 12-ին փողոց 1-ին նրբ. 24 (այս հասցեն ՀՀ կառ. 26.05.2011 թվ. N 990-Ն որոշման հավելված N 1 մեջ ի սկզբանե սխալ է նշված եղել, իրականում հասցեն պետք է լիներ՝ Ներքին Շենգավիթ 12 փողոց 1-ին նրբ. 24), Շիրակի փող. 1901 «Երևանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, Շիրակի փող. 72 շենքին հարակից տարածքում ավտոտնակներից մեկը, Ծովակալ Իսակովի փող. գտնվող խանութ, Ծովակալ Իսակովի փող. գտնվող հողամաս, Ծովակալ Իսակովի փող. գտնվող խանութ նկուղով, Ծովակալ Իսակովի փող. գտնվող բնակելի տուն, Ծովակալ Իսակովի փող. գտնվող խանութ նկուղով, Ծովակալ Իսակովի փող. գտնվող հողամաս, Ծովակալ Իսակովի փող. գտնվող խանութ, Ծովակալ Իսակովի փող. 1, Ծովակալ Իսակովի փող. 1/1, Ծովակալ Իսակովի փող. 1/3,</p>

	Ծովակալ Իսակովի փող. 7, Կենտրոնական 1-ին փող. 4, Կենտրոնական 1-ին փող. 4/1, Կենտրոնական փող. 1, Կենտրոնական փող. 4/2, Սարալանջի փող. 1, Սարալանջի փող. 1/1, Սարալանջի փող. 1/2, Սարալանջի փող. 1/3, Սարալանջի փող. 2, Սարալանջի փող. 3, Սարալանջի փող. 4, Սարալանջի փող. 29, Սարալանջի փող. 31,
3.	<b>Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը</b>
	-
4.	<b>Կարգավորման նպատակը և բնույթը</b>
	«Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթներին համաձայն, բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելուց հետո սահմանված կարգով և ժամկետներում կկազմվեն օտարվող սեփականության նկարագրության արձանագրությունները և սահմանված կարգով կներկայացվեն օտարման ենթակա սեփականության սեփականատերերին կամ այդ սեփականությունը փաստացի տնօրինող անձանց՝ հետագա իրացումն իրականացնելու նպատակով:
5.	<b>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</b>
	-
6.	<b>Ակնկալվող արդյունքը</b>
	«ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի թիվ 990-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ ամբողջությամբ կընդգրկվեն իրացման ենթակա տարածքները, որից հետո «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքով և բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դրույթներին համապատասխան Երևանի քաղաքապետարանը՝ որպես ձեռքբերող, կիրականացնի իր պատվիրակված լիազորությունները:
7.	<b>Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)</b>
	-

<b>Տեղեկանք հասարակության մասնակցության մասին</b>	
1	<b>հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը</b>
	ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 7-ի «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի՝ հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը և փոխհատուցման առանձին տեսակների հաշվարկման կարգը հաստատելու մասին» թիվ 273-Ն որոշմամբ սահմանվում է Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում հանրային մասնակցության և փաստաթղթերի բացահայտման կարգը:
2	<b>հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին</b>
	«ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի թիվ 990-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչվող լրացուցիչ տարածքների բնակիչների հետ «Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ ծրագրի իրականացման մասնագետների խմբի կողմից 2013 թվականի մայիսի 6-ին և հունիսի 10-ին ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 7-ի «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի՝ հողի օտարման և տարաբնակեցման շրջանակը և փոխհատուցման առանձին տեսակների հաշվարկման կարգը հաստատելու մասին» թիվ 273-Ն որոշմամբ սահմանված կարգով կազմակերպվել է հանրային իրազեկման հանդիպումներ և լսումներ՝ Արշակունյաց և Շիրակ փողոցների հատման վայրի և Արգավանդի խճուղու բնակիչների մասնակցությամբ:
3	<b>հասարակության մասնակցության արդյունքները</b>
	Կազմակերպված հանրային իրազեկման հանդիպման արդյունքում իրացման գոտու բնակիչներին է ներկայացվել իրացման նպատակը, փոխհատուցման չափերի հաշվարկման մեթոդը և վճարման կարգը:
4	<b>Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)</b>
	-

